# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 184 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՌԵԲԵԿԱ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-026-009-012-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 22-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված Ռեբեկա Ստեփանյանի դիմումը, **որոշում եմ**.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Բավրա գյուղում գտնվող քաղաքացի Ռեբեկա Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 3, հասցեում գտնվող, 08-026-009-012-1 կադաստրային ծածկագով բնակելի տունը / գրանցված 2002 թվականի դեկտեմբերի 20-ին, վկայական N 466932/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ բավրա, 3-րդ փողոց, բնակելի տուն 3:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 185 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՑՈՂԱՄԱՐԳ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՋՈՒԼԻԵՏԱ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ ԵՎ ՎԻՐԱԲ ԱՐՇԱԿՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-112-022-030-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 18-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված, Ջուլիետա Արշակյանի դիմումը որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Ցողամարգ գյուղում գտնվող քաղաքացիներ Ջուլիետա Արշակյանին և Վիրաբ Արշակյանին, սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, Սարապատ համայնք, գյուղ Ցողամարգ, 1-ին փողոց, բնակելի տուն 13 հասցեում գտնվող, 08-112-022-0030-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված 2004 թվականի սեպտեմբերի 30-ին վկայական N 1194409/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Ցողամարգ , 1-ին փողոց, բնակելի տուն 13:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Աշոցք, 0245 2-14-82, ashotsq.hamaynq@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 186-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի № 1419-Ն ՈՐՈՇՄԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԶՈՀՎԱԾ ՆԱԽԿԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՎԱՉԱԳԱՆ ՀՐԱՉԻԿԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

I ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 19-րդ հոդվածի, 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի դրույթներով, ինչպես նաև հաշվի առնելով զոհված զինծառայող Վաչագան Հրաչիկի Դարբինյանի այրու՝ Սուսաննա Երվանդի Երվանդյանի դիմումն ու ներկայացված փաստաթղթերը իր ընտանիքին բնակարանային բարելավման կարիքավորների ցուցակում ընդգրկելու մասին՝ 2024 թվականի ապրիլի 4-ին հարուցվել է վարչական վարույթ:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

Զոհված զինծառայող Վաչագան Հրաչիկի Դարբինյանի կինը՝ Սուսաննա Երվանդի Երվանդյանը և դուստրը՝ Անգելինա Վաչագանի Դարբինյանը՝ ծնված 18.07.2016թ. հաշվառված են Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի գյուղ Աշոցք 1 փողոց, 2 անցուղի, 3 շենք, 32 բնակարան հասցեում, որը սեփականության իրավունքով պատկանում է վերջինիս ծնողներին ու հորեղբորը: Սուսաննա Երվանդյանի ամուսինը՝ Վաչագան Հրաչիկի Դարբինյանը զոհվել է 2020 թվականի նոյեմբերի 2-ին Արցախի Հանրապետությունում մարտական գործողությունների ժամանակ: Վերջինիս այրուն ու դստեր՝ անչափահաս Անգելինա Երվանդյանին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության կողմից տրվել են տեղեկանքներ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սոցիալական ապահովության երաշխիքներից և արտոնություններից օգտվելու մասին: Մինչև ամուսնու զոհվելը Սուսաննա Երվանդյանը և դուստրը բնակվել են ամուսնու ծնողների հետ՝ Հայաստանի Հանրապետություն, Արագածոտն, Թալին, Արագածավան, Պ.

Սևակի փողոց, տուն 35 հասցեում: Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրված տեղեկանքների համաձայն Վաչագան Հրաչիկ Դարբինյանի զոհվելու օրվան նախորդող հինգ տարիների ընթացքում և դրանից հետո վերջինիս և կնոջ ու դստեր անվամբ Հայաստանի Հանրապետության տարածքում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության և վարձակալության իրավունքի պետական գրանցում կատարված չէ: Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզ, համայնք Արագածավան, գյուղ Արագածավան, Պ. Սևակի փողոց, 35 բնակելի տուն հասցեով անշարժ գույքը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով գրանցված է եղել զոհված զինծառայող Վաչագան Հրաչիկի Դարբինյանի անվամբ (նշված անշարժ գույքի նկատմամբ կատարվել է ժառանգության իրավունքի վկայագրից ծագող իրավունքների պետական գրանցում): Զոհվածի այրին՝ Սուսաննա Երվանդի Երվանդյանը 2024 թվականի ապրիլի 16-ին Հայաստանի Հանրապետության «Արագածոտնի մարզ» նոտարական տարածքի գրասենյակում տվել է հայտարարություն, համաձայն որի բաց է թողել ժառանգության ընդունման վեցամսյա ժամկետը, չի ընդունել ամուսնու զոհվելից հետո իրեն հասանելիք ժառանգությունը, նրան պատկանող գույքի նկատմամբ՝ ինչից էլ որ այն բաղկացած լինի, որտեղ էլ որ գտնվի հավակնություններ և պահանջ չունի, չի ցանկանում ձևակերպել իր ժառանգական իրավունքները և նպատակ էլ չունի դիմել դատարան ժառանգության ընդունման ժամկետը վերականգնելու և ժառանգական գույքի բաժանման համար: Ընտանիքին պետական բյուջեի, միջազգային դոնոր կազմակերպությունների և այլ բարեգործական կազմակերպությունների հաշվին բնակարանային փոխհատուցում ստանալու՝ բնակարանի հատկացում, բնակարանի գնման վկայագրի կամ բնակարան ձեռք բերելու համար անհատույց պետական ֆինանսական աջակցության տրամադրում չի եղել, ուստի Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419 - Ն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» որոշման 10-րդ կետի համաձայն, այն է՝ համայնքի ղեկավարը բնակարանային պայմանների հաշվառման է ընդունում այն շահառուներին, ովքեր զինծառայողի ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող ճանաչելու համար հիմք հանդիսացող զինվորական ծառայության հետ պատճառական կապի վերաբերյալ իրավասու ռազմաբժշկական փորձաքննական մարմնի եզրակացության տրման կամ զինծառայողի զոհվելու (մահանալու) օրվա դրությամբ հաշվառված են տվյալ բնակավայրում, ենթակա են հաշվառվելու բնակարանային պայմանների բարելավման ցուցակում:

## III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների

ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի դրույթը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության 26.04.2021 թվականի N 36/2401 և N 36/2402 ու բնակչության պետական ռեգիստրում հաշվառված անձանց մասին N 240341034045 և N 240341034044 տեղեկանքներ, ինչպես նաև քաղաքացի Սուսաննա Երվանի Երվանդյանի հայտարարությունը ժառանգության իրավունքից հրաժարվելու մասին․ ***որոշում եմ***

1. Զոհված զինծառայող՝ Վաչագան Հրաչիկի Դարբինյանի կնոջը՝ Սուսաննա Երվանդի Երվանդյանին և դստեր՝ Անգելինա Վաչագանի Դարբինյանին հաշվառել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի N 1419-Ն «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի և Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի ու հատուկ ստորաբաժանումների՝ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» որոշմամբ բնակարանային կարիքավոր շահառուների ամփոփ ցուցակում:
2. Քաղաքացի Սուսաննա Երվանդի Երվանդյանին իրազեկել սույն վարչական ակտի մասին՝ տրամադրելով որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սուսաննա Երվանդի Երվանդյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ 2801, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Աշոցք համայնք, գ Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 187 -Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-015-0066-0082 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.029165 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՇԱԿ ՆՈՐԱՅՐԻ ԱՂԵԿՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024թ. մարտի 15-ի թիվ 17-Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 19-ին Աշոցքի համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին կազմված 2024 թվականի ապրիլի 19-ի թիվ 4 արձանագրությունները (ձև 5 և ձև 6), **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությանը հանդիսացող բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարարական կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0066-0082 կադաստրային ծածկագրով 0.029165 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 28022024-08-0060), 207000 (երկու հարյուր յոթ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ քաղաքացի Արշակ Նորայրի Աղեկյանին (նույնականացման քարտ՝ 009325465, 034 տրված՝ 31.01.2018թ., հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 3-րդ փողոց, շենք 6, բնակարան 4) այդ հողամասում հասարակական կառուցապատման համար:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր և պարտավորեցնել գնորդին՝ գույքի նկատմամբ իրավունքները սահմանված կարգով և ժամկետում ենթարկել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
## ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ 2801, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Աշոցք համայնք, գ Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 188 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-015-0037-0078 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.009975 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻ ՍԱՍՈՒՆԻԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024թ. մարտի 15-ի թիվ 17-Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 19-ին Աշոցքի համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին կազմված 2024 թվականի ապրիլի 19-ի թիվ 4 արձանագրությունները (ձև 5 և ձև 6), **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությանը հանդիսացող բնակավայրերի հողեր նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0037-0078 կադաստրային ծածկագրով 0.009975 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 29022024-08-0058), 49450 (քառասունինը հազար չորս հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ քաղաքացի Սասունիկ Սերյոժայի Սարգսյանին (անձնագիր՝ AL0226005, 034 տրված՝ 27.04.2023թ., հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 3-րդ փողոց, շենք 6, բնակարան 11) այդ հողամասում բնակելի կառուցապատման համար:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր և պարտավորեցնել գնորդին՝ գույքի նկատմամբ իրավունքները սահմանված կարգով և ժամկետում ենթարկել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
# ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հասցե՝ 2801, Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ
Աշոցք համայնք, գ Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245) 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 189 -Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀՈՂԵՐ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 08-015-0037-0077 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.0144 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՂԹՈՂ ՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻ ՍՄԲԱՏ ՌՈԲԵՐՏԻ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2024թ. մարտի 15-ի թիվ 17-Ա որոշումը և 2024 թվականի ապրիլի 19-ին Աշոցքի համայնքապետարանում կայացած հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին կազմված 2024 թվականի ապրիլի 19-ի թիվ 4 արձանագրությունները (ձև 5 և ձև 6), **որոշում եմ՝**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությանը հանդիսացող բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 08-015-0037-0077 կադաստրային ծածկագրով 0.0144 հեկտար մակերեսով հողամասը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական՝ N 07032024-08-0042), 103500 (մեկ հարյուր երեք հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ արժեքով վաճառել աճուրդի արդյունքում հաղթող ճանաչված մասնակից՝ քաղաքացի Սմբատ Ռոբերտի Գալստյանին (անձնագիր՝ AU0648069, 034 տրված՝ 15.03.2022թ., հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գ. Աշոցք, 3-րդ փողոց, շենք 5, բնակարան 28) այդ հողամասում հասարակական կառուցապատման համար:
2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր և պարտավորեցնել գնորդին՝ գույքի նկատմամբ իրավունքները սահմանված կարգով և ժամկետում ենթարկել պետական գրանցման:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 ապրիլի 2024 թվականի N 190-Ա

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՅԿՈՒՇ ԵՂՈՅԱՆԻՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 72-Ն որոշման հավելված 1-ի 9-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության. ***որոշում եմ***

Անհատ ձեռնարկատեր Հայկուշ Եղոյանին (ՀՎՀՀ՝ 57333888, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 63.1043513/2018-10-30, իրավաբանական հասցեն՝ գյուղ Աշոցք 4 փողոց 10/1, ընդհանուր մակերեսը՝ 25 քառակուսի մետր) 2024 թվականի երկրորդ եռամսյակի համար տալոգելից և ալկոհոլային խմիչքների, օրենքով սահմանված սահմանափակումներին համապատասխան ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքիթույլտվություն:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ**

2024 թվականի ապրիլի 29
գյուղ Աշոցք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ապրիլի 2024 թվականի N 191 - Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՇՈՑՔ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՆԴՈՒԽՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԾՐՈՒՆԻԿ ՀԱԿՈԲԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-070-003-1 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 4) ենթակետով, 50-րդ կետով և հիմք ընդունելով 2024 թվականի ապրիլի 23-ին Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրված, Սանդուխտ Մկրտչյանի դիմումը որոշում եմ.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք գյուղում գտնվող քաղաքացիներ Սանդուխտ Մկրտչյանին և Արծրունիկ Հակոբի Ղազարյանին, սեփականության իրավունքով պատկանող, Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, գյուղ Աշոցք, 7-րդ փողոց, 6-րդ փակուղի, բնակելի տուն 4 հասցեում գտնվող, 08-015-070-003-1 կադաստրային ծածկագրով բնակելի տանը /գրանցված 2006 թվականի օգոստոսի 18-ին վկայական N 1216441/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 7-րդ փողոց փողոց, 6-րդ փակուղի, բնակելի տուն 4:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

2024 թվականի ապրիլի 30
գյուղ Աշոցք

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

02 մայիսի 2024 թվականի N 192 - Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ ԼՅՈՒՍՅԱ ԼԵՄԻԿԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ 97,97 ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՀԻՄՔԸ ԵՎ ԴՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ 0,01504 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 33-րդ, 33.1-րդ, 34-րդ, 35-րդ կետերի «դ», ենթակետերի, 35.1-րդ, 36-րդ կետի դրույթներով և հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող 08-015-0001-0035 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.01504 հեկտար բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա, քաղաքացի Լյուսյա Լեմիկի Պողոսյանի կողմից ինքնակամ կառուցված ավտոտնակի հիմքը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով /ՀՕ-397-Ն/ սահմանված օրինականացման պայմաններին, ինքնակամ կառուցված ավտոտնակի հիմքը փաստացի տնօրինում, տիրապետում և օգտագործում է քաղաքացի Լյուսյա Լեմիկի Պողոսյանը և այն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի 2024 թվականի ապրիլի 10-ի թիվ 164-Ա որոշմամբ ավտոտնակի հիմքը ճանաչվել է օրինական, այն համարվել է համայնքի սեփականություն և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները ենթարկվել են պետական գրանցման (վկայական՝ 26042024-08-0037), **որոշում եմ՝**

1. Քաղաքացու կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Աշոցք բնակավայրի վարչական սահմաններում գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող 08-015-0001-0035 կադաստրային ծածկագրով հողատարածքում առկա 0.01504 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված, օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **97,97** քառակուսի մետր արտաքին մակերեսով ավտոտնակի հիմքը և դրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի սեփականությունը հանդիսացող 08-015-0001-0035 կադաստրային